ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի սեպտեմբերի 13-ին կայացած Գիտական Խորհրդի N2 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 27-ը (ցուցակը կցվում է)

Ուսումնական տարվա առաջին նիստի անցկացման կապակցությամբ, խորհրդի նախագահ **Սարգիս Քելյանը** հանդես եկավ շնորհավորական ուղերձով: Նա հույս հայտնեց, որ նոր ուսումնական տարին կլինի առավել հագեցած և արդյունավետ, քանի որ որակյալ կրթությունը ֆակուլտետի գործունեության մեջ միշտ եղել է գերակա նպատակ:

Նշեց նաև, որ թիմային և միասնական աշխատանքի շնորհիվ միայն կիրագործվեն կրթության որակի բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները:

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. **Ֆակուլտետի հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ատեստավորում**
/զեկ. հեռ.ուս. ասպ. և հայց-ր/

2. **2024-2025 ուստարվա ֆակուլտետի Գիտական Խորհրդի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում** /զեկ. գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյան/

3. **2024/2025 ուստարվա ընդունելության արդյունքները և խնդիրները**
/զեկ.դեկան Ս.Ս.Քելյան/

4. **2023/2024 ուստարվա ուսումնական պրակտիկաների արդյունքների քննարկում**
/զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

5. **2023/2024 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների քննարկում**
/զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

6. **Անվանական կրթաթոշակ ստանալու թեկնածուների առաջադրում**
/զեկ. գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյան/

7. **Պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու հարցի քննարկում**
/զեկ. ամբիոնի վարիչներ/

8. **Ֆակուլտետում գործող ուսումնական լաբորատորիաների անվանափոխության հարցի քննարկում և հաստատում** /զեկ. ամբիոնի վարիչներ/

9. **Աշխատանքային կարգապահություն, ուսանողների հաճախում և դասալսումների կազմակերպումն ամբիոններում** /զեկ.դեկան Ս.Ս.Քելյան/

10. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

1.

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի** վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Արտակ Փիլոյանի** հաղորդումը ամբիոնի **2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Լենա Մարալյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Լենա Մարալյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի** վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Արտակ Փիլոյանի** հաղորդումը ամբիոնի 3-րդ տարվա **հեռակա ուսուցման ասպիրանտ Մարիամ Պետրոսյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի **3-րդ տարվա** հեռակա ուսուցման ասպիրանտ **Մարիամ Պետրոսյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

1.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի** վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Արտակ Փիլոյանի** հաղորդումը ամբիոնի **առկա ուսուցման ասպիրանտ Էրիկ Մանվելի Հովսեփյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. **Վերանայել** Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի **առկա ուսուցման ասպիրանտ Էրիկ Մանվելի Հովսեփյանի** ատենախոսության ներկայացված թեմայի *«Ենթակառուցվածքների պլանավորման և մոնիթորինգի բարելավումը 3D լազերային սկանավորման տվյալների ինտեգրման միջոցով»* վերնագիրը և հաստատել այն ***«Տրանսպորտային ենթակառուցվածքների պլանավորման և մշտադիտարկման բարելավում եռաչափ լազերային սկանավորման տվյալների ինտեգրման միջոցով»*** վերնագրով («Աշխարհագրություն» (Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ **գիտական ղեկավար** նշանակել տեխ. գիտ. թեկնածու, ասիստենտ **Ալեքսանդր Անդրանիկի Առաքելյանին:**

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Էրիկ Մանվելի Հովսեփյանի** ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Տրանսպորտային ենթակառուցվածքների պլանավորման և մշտադիտարկման բարելավում եռաչափ լազերային սկանավորման տվյալների ինտեգրման միջոցով»** («Աշխարհագրություն» (Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ **գիտական ղեկավար** նշանակել տեխ. գիտ. թեկնածու, ասիստենտ **Ալեքսանդր Անդրանիկի Առաքելյանին:**

1.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Սերվիսի** ամբիոնի վարիչ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի հայցորդ **Իրինա Վանոյի Սահակյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Սերվիսի** ամբիոնի հայցորդ **Իրինա Վանոյի Սահակյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

1.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրությա**ն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

1.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սոնա Կարենի Տերտերյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սոնա Կարենի Տերտերյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

1.7 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սվետա Սաֆարյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության

ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Սվետա Սաֆարյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

1.8 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը ամբիոնի **առկա ուսուցման ասպիրանտ Մարի Չաքրյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. **Վերանայել** Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի **առկա ուսուցման ասպիրանտ Մարի Չաքրյանի** ատենախոսության ներկայացված թեմայի *«Բնահեն լուծումները որպես քաղաքային միջավայրի կլիմայադիմակայության գործիք (ՀՀ քաղաքների օրինակով)»* վերնագիրը և հաստատել ***«Բնահենք լուծումները որպես քաղաքային միջավայրի կլիմայադիմակայության գործիք (ՀՀ քաղաքների օրինակով)»*** («Աշխարհագրություն» (Ընդհանուր աշխարհագրություն), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ գիտական ղեկավար նշանակել Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու **Արսեն Թորգոմի Գրիգորյանին**:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, **Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Մարի Չաքրյանի** ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Բնահենք լուծումները որպես քաղաքային միջավայրի կլիմայադիմակայության գործիք (ՀՀ քաղաքների օրինակով)»** («Աշխարհագրություն» (Ընդհանուր աշխարհագրություն), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ **գիտական ղեկավար** նշանակել Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու **Արսեն Թորգոմի Գրիգորյանին**:

1.9 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության** ամբիոնի վարիչ **դոց.Մ.Ս.Մկրտչյանի** հաղորդումը ամբիոնի հայցորդ **Ալեքսանդր Խաչատրյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ **Ալեքսանդր Խաչատրյանին ատեստավորել**՝ ուսումը շարունակելու համար:

2. ԼՍԵՑԻՆ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտքարտուղար դոց. Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը ֆակուլտետի **Գիտական խորհրդի 2024/2025 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ**: Նա նշեց, որ ներկայացված 2024/2025 ուս.տարվա աշխատանքային պլանի նախագիծը նախապես տրամադրվել է Խորհրդի անդամներին՝ ծանոթանալու, առաջարկություններ և փոփոխություններ կատարելու նպատակով:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Որոշ կետեր վերաձևակերպելուց հետո հաստատել Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գիտական խորհրդի 2024/2025 ուս.տարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. **Հաստատել 2024/2025** ուս.տարվա Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գիտական Խորհրդի աշխատանքային պլանը՝ ձևակերպումների մեջ փոփոխություններ կատարելուց հետո (աշխ.պլանը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանի** հաղորդումը **2024/2025 ուստարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ**: Նա մանրամասնորեն ներկայացրեց ֆակուլտետ ընդունված ուսանողների թիվն ըստ մասնագիտությունների (բակալավրիատ, մագիստրատուրա): Հաղորդման ընթացքում **դեկան Ս.Քելյանը** բարձրաձայնեց իր մտահոգությունը բակալավրիատում խիստ սակավաթիվ ուսանողներով կուրսերի վերաբերյալ և ցավով նշեց, որ ընդունելության նման թվերը պահանջում են առաջնահերթ լուծումներ: **Դեկան Ս.Քելյանը** հայտնեց, որ ամբիոնի վարիչների, ռեկտորատի հետ քննարկումների արդյունքում կայացվել է ընդունելության քննություններում առարկայական փոփոխություններ կատարելու որոշում և հույս հայտնեց, որ խնդրի նման լուծումը կկրի ժամանակավոր բնույթ: Ամփոփելով, **դեկան**

Ս.Քելյանը, շնորհակալություն հայտնեց ռեկտորատին ընդունելության նման ցածր ցուցանիշերի պայմաններում կուրսեր ձևավորելու և ընդունելության քննություններում փոփոխության հնարավորություն ընձեռելու համար: Խոսելով մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ՝ **դեկան Ս.Քելյանը** ուրախությամբ նշեց, որ մագիստրատուրայի ընդունելությունը գերազանցել է սպասումները: Հավելեց նաև, որ մագիստրոսների ուսման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար ռեկտորատը հնարավորություն է տվել մշակել ծրագիր, որը թույլ կտա աշխատող մագիստրոսների ուսուցումը կազմակերպել մի փոքր այլ նախապայմաններով և մոտեցմամբ: Հաղորդման ավարտին **դեկանը** հորդորեց ամբիոնի վարիչներին կարճ ժամանակահատվածում ներկայացնել նշված ծրագիրը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՅԱՆ. ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ ***Գ.Ալեքսանյանն*** առաջարկեց քննարկումներից անցնել գործի և ներկայացրեց իր կողմից իրականացրած մոնիթորինգի արդյունքներն ու **երկամյա և մեկուկեսամյա** կրթական ծրագրերի վերաբերյալ վիճակագրությունը: Խոսքի ավարտին դեկանի տեղակալ ***Գ.Ալեքսանյանն*** առաջարկեց վերանայել կրթական ծրագրերը և հնարավորության դեպքում երկամյա կրթական ծրագրերը վերափոխել դարձնելով դրանք մեկուկեսամյա:

ՈՐՈՇԵՅԻՆ. Ընդունել ի գիտություն

4. ԼՍԵՅԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **2023/2024 ուստարվա ուսումնական պրակտիկաների արդյունքների վերաբերյալ**: Նա հակիրճ ներկայացրեց պրակտիկաների կազմակերպման ընթացքը և արդյունքները: Հաղորդման ընթացքում Գ.Ալեքսանյանը հայտնեց, որ պրակտիկան ըստ սահմանված կարգի և պահանջների չմասնակցելու արդյունքում 10 ուսանող չեն ստացել ստուգարքը, որը վերահանձնելու հնարավորություն ունեն հաջորդ տարի: Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանը** հույս հայտնեց ընթացիկ տարում բարելավել պրակտիկայի անցկացման ընթացքը՝ հաշվի առնելով նախորդ տարվա

պրակտիկայի ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները, անճշտություններն ու խնդիրները:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՅԱՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանը 2023/2024 ուստարվա ուսումնական պրակտիկաները համարեց ստացված, չնայած այն հանգամանքին, որ Սյունիքի մարզում պրակտիկայի կազմակերպման առաջարկն ընդունվել էր ոչ միանշանակ: **Դեկան Ս.Ս.Քելյանը** հայտնեց, որ լսել է պրակտիկայի մասնակիցների կարծիքը՝ թե՛ ուսանողների և թե՛ ղեկավարների արձագանքը դրական է, պրակտիկայի նմանօրինակ անցկացումը միանշանակ հավանության արժանի ձևաչափ է: Ամփոփելով, **դեկան Ս.Ս.Քելյանը,** հույս հայտնեց ՀՀ տարբեր մարզերում պրակտիկայի անցկացման նախաձեռնության շարունակական լինելու մասին:

ՈՐՈՇԵՅԻՆ. Ընդունել ի գիտություն

5. ԼՍԵՅԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **2023/2024 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների վերաբերյալ:** Նա ներկայացրեց տարբեր պատճառներով հեռացված ուսանողների թվային տվյալներ ըստ մասնագիտությունների՝ **Սերվիս** մասնագիտություն – 3 ուսանող, **Երկրաբանություն** մասնագիտություն – 3 ուսանող, **Քարտեզագրություն և կադաստրային գործ** մասնագիտություն – 3 ուսանող, **Աշխարհագրություն** մասնագիտություն – 0 ուսանող:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՅԱՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանը** ցավով խոսեց հեռացված՝ ակադեմիական անբավարար առաջադիմությամբ ուսանողների մասին: Նա հայտնեց կրթության որակի բարձրացման համար ճիշտ ուղու վրա գտնվելու իր կարծիքը, և հույս հայտնեց, որ անբավարար առաջադիմության պատճառով ուսանողների հեռացումը համալսարանից յուրովի ազդակ է մյուս ուսանողների համար:

6. ԼՍԵՅԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը **2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակում**

անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին հարցի վերաբերյալ: Դոց.Ե.Մանուկյանը նշեց, որ ԵՊՀ-ն չորս անվանական կրթաթոշակ է սահմանել (**մեկ** Աշխարհագրություն և **երեք** Երկրաբանություն մասնագիտությունների համար) ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող և հասարակական ակտիվություն ցուցաբերող ուսանողների համար: Հավելեց, որ սահմանված կրթաթոշակներին կարող են հավակնել 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողները: Հաղորդման ընթացքում Ե.Մանուկյանը նշեց, որ անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ընտրությունը կատարվել է գործող կարգի պահանջներին համապատասխան և ներկայացրեց հավակնորդներին՝ **Քրիստինե Արթուրիկի Սարգսյան** Աշխարհագրության մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրս, **Ազնիվ Համլետի Ավետիսյան** Աշխարհագրության մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս**, Միլվա Գեղամի Ավետիսյան** Աշխարհագրության մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս**, Էլեն Լեոնիկի Մաթևոսյան** Աշխարհագրության մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս, **Վարդուհի Պետրոսի Կարապետյան** Աշխարհագրության մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանն** առաջարկեց 2024-2025 ուստարվա 1ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը դնել քվեարկության. երաշխավորել ընտրված ուսանողներին՝ ստանալ նշված անվանական կրթաթոշակները

6.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 25, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 2 Աշխարհագրության բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող **Քրիստինե Արթուրիկի Սարգսյանին** երաշխավորել **«Ղևոնդ Ալիշան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

6.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով՝ ԿՈՂՄ՝ 27, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0, Երկրաբանության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Անժելա**

Սարգսի Բաղդասարյանին երաշխավորել **«Տիգրան Զրբաշյան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

6.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 27, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0 «Երկրաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Մերի Վարդանի Համբարձումյանին** երաշխավորել **«Բնապահպանություն»** ուղղվածության «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

6.4 ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 27, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0 «Երկրաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Մարինա Արթուրի Բանգոյանին** երաշխավորել **«Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության **«Գեորգի Տեր-Ստեփանյան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

7.

7.1 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ Մ.Ս.Մկրտչյանի հաղորդումը*** պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Մ.Ս.Մկրտչյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի ***հայցորդ Շուշանիկ Միսակի Տիգրանյանի*** թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել ***Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի***

հայցորդ Շուշանիկ Միսակի Տիգրանյանի թեկնածությունը, որպես ***պրոֆեսոր Ս.Հ.Հայրոյանի օգնական***:

7.2 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը*** պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Ս.Ռ.Սուվարյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Սերվիսի ամբիոնի **մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Մարիամ Սարգսի Տաշյանի** թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել ***Սերվիսի ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Մարիամ Սարգսի Տաշյանի*** թեկնածությունը, որպես ***պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի*** օգնական:

7.3 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի*** հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Ա.Ս.Փիլոյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող ***Հովհաննես Արծրունի Հովհաննիսյանի*** թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել ***Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի մագիստրատուրայի***

2-րդ կուրսի ուսանող Հովհաննես Արծրունի Հովհաննիսյանի թեկնածությունը, որպես դոցենտ Ա.Հ.Հովհաննիսյանի օգնական:

8.

8.1 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար դոց.**Վ.Մ.Մանուկյանի** հաղորդումը ամբիոնում գործող **«Շլիխային ուսումնասիրության լաբորատորիա»-ի** անվանափոխության հարցը՝ վերանվանելու **«Միներալոգիայի և պետրոգրաֆիայի լաբորատորիա»**:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի 30.08.2024 թիվ 1 նիստի որոշումը և ֆակուլտետի խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ գործող **«Շլիխային ուսումնասիրության լաբորատորիա»**-ն վերանվանել **«Միներալոգիայի և պետրոգրաֆիայի լաբորատորիա»**:

8.2 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի *Երկրաֆիզիկայի, Ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի հաղորդումը* ամբիոնում գործող ուսումնական լաբորատորիաների անվանափոխության հարցի վերաբերյալ: Մ.Մկրտչյանը խորհրդի անդամներին ներկայացրեց ամբիոնի նիստի ընթացքում ընդունված որոշումը՝ մասնավորապես նշեց որ ուսումնական լաբորատորիաների անվանափոխության անհրաժեշտություն չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի *Երկրաֆիզիկայի, Ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի* 11.09.2024 թիվ 1 նիստի որոշումը և ֆակուլտետի խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ամբիոնում գործող **ուսումնական լաբորատորիաների անվանումները թողնել անփոփոխ**:

9. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **դեկան Ս.Ս.Քելյանի** հաղորդումը **աշխատանքային կարգապահություն, ուսանողների հաճախելիության և ամբիոններում դասալսումների կազմակերպման վերաբերյալ:** Դեկան Ս.Ս.Քելյանն իր խոսքում մասնավորապես խոսեց ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման մասին: Խորհրդի ուշադրությունը հրավիրեց e-learning հարթակի հետևողական լրացման, առարկայական ծրագրերի, գրականության և այլ ուսումնական նյութերի տեղադրման վրա: Դեկան Ս.Ս.Քելյանը հորդորեց գրանցել ուսանողների բացակայությունները՝ մասնակցության համար հատկացվող միավորի անսխալ արձանագրման և ուսանողների հաճախումները խթանելու համար:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. **Դոց.Գ.Փ.Ալեքսանյանն** հորդորեց ամբիոնի վարիչներին հետևողական լինել սպասարկող առարկաներին, ինչպես նաև համաձայնեցնել ամբիոնների հետ սպասարկվող առարկայի ծրագրերը: **Դոց.Ռ.Ս.Մովսեսյանը** մտահոգություն հայտնեց “Երկրաբանություն” մասնագիտության “Քիմիա” առարկայի մասնագիտական ուսուցման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Ս.Ս.Քելյան*

Գիտական խորհրդի քարտուղար՝ *Ե.Ս.Մանուկյան*